INTERNATIONAL MONETARY FUND

COMMUNICATIONS DEPARTMENT

Մամլո հաղորդագրություն թիվ. 19/59
ԱՆՀԱՊԱՂ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ
26 փետրվարի 2019 թ.

International Monetary Fund
Washington, D.C. 20431 USA

ԱՄՀ աշխատակազմն ավարտում է 2019 թ. IV Հոդվածի շուրջ առաքելությունը և աշխատակազմի մակարդակով պայմանավորվածություն ձեռք բերում Հայաստանի հետ կանխազգուշական «Սթենդ-բայ» ծրագրի շուրջ

Առաքելության ավարտի մամլո հաղորդագրությունները ներառում են ԱՄՀ աշխատակազմի թիմերի հայտարարությունները, որոնք փոխանցում են երկիր կատարած այցից հետո նախնական եզրահանգումները: Սույն հայտարարության մեջ արտահայտված են ԱՄՀ աշխատակազմի տեսակետները և պարտադիր չէ, որ ներկայացնեն ԱՄՀ Գործադիր խորհրդի տեսակետները: Առաքելության նախնական եզրահանգումներից ելնելով՝ աշխատակազմը կկազմի զեկույց, որը ղեկավարության կողմից հաստատվելու դեպքում կներկայացվի ԱՄՀ գործադիր խորհրդին՝ քննարկման և որոշման համար:

Հայաստանի իշխանությունների խնդրանքով՝ Արժույթի միջազգային հիմնադրամի աշխատակազմի թիմը՝ պրն. Հոսեյն Սամիի ղեկավարությամբ, փետրվարի 12-26-ն այցելել է Երևան՝ ԱՄՀ-ի կանխազգուշական «Սթենդ-բայ» ծրագրի օժանդակությամբ եռամյա տնտեսական ծրագիրը քննարկելու և IV Հոդվածի շուրջ 2019 թ. խորհրդակցություններն անցկացնելու համար: Առաքելության ավարտին պրն. Սամիին արել է հետևյալ հայտարարությունը.

«Ուրախ եմ հայտարարել, որ ԱՄՀ թիմը և Հայաստանի իշխանությունները աշխատակազմի մակարդակով պայմանավորվածություն են ձեռք բերել 250 միլիոն դոլար գումարով կանխազգուշական «Սթենդ-բայ» ծրագրի շուրջ՝ նոր կառավարության բարեփոխումների ծրագրերին օժանդակելու և արտաքին ցնցումների նկատմամբ դիմադրողունակությունն ամրապնդելու համար: Նշված ծրագրերը նպատակաուղղված են մակրոտնտեսական և ֆինանսական կայունության պահպանման համար ծանրակշիռ քաղաքականությունների վարմանը և ներառական աճի խթանման համար բարեփոխումների առաջ մղմանը: Պայմանավորվածությունը ենթակա է հաստատման ԱՄՀ գործադիր խորհրդի կողմից, որի քննարկումն ակնկալվում է 2019 թ. մայիսին:

«Առաջնորդվելով մակրոտնտեսական առողջ քաղաքականություններով՝ Հայաստանն ունեցել է կուռ տնտեսական կատարողական: 2018 թ. աճը չափավորվել է որոշակիորեն ավելի կայուն մակարդակում՝ մասամբ արտացոլելով առևտրային գործընկեր երկրներում տնտեսական աճի դանդաղումը: Հարկաբյուջետային կոնսոլիդացումը պահպանել է նախատեսված հունը, որին օժանդակել է հարկային վարչարարության ամուր ջանքը, և պետական պարտքի տոկոսը ՀՆԱ-ի նկատմամբ նվազել է: Դրամավարկային և ֆինանսական կայուն պայմանները պահպանվել են, ընդ որում 2019 թ. հունվարին ՍԳԻ գնաճը 1 տոկոսից ցածր էր և փոխարժեքի վրա ճնշումը՝ սահմանափակ: Բանկային հատվածը լավ կապիտալացված է և վարկավորման աճը օժանդակել է տնտեսական աշխուժությանը: Կառուցվածքային մասով՝ 2018 թ. հուլիսին կենսաթոշակային բարեփոխումն ուժի մեջ մտավ, հարկաբյուջետային արդիականացված կանոնը գործարկվել է և նախապատրաստվում է պետության և մասնավոր հատվածի միջև գործընկերության (ՊՄԳ) մասին օրենք:

«Ապագայի մասին խոսելով՝ 2019 թ. ակնկալվում է աճի չափավորում 4½ տոկոսի շուրջը՝ արտացոլելով համաշխարհային ավելի թույլ միջավայրն ու պղնձի գները, միջնաժամկետ հատվածում պահպանվելով 4-5 տոկոսի միջակայքում: ՍԳԻ գնաճը կանխատեսվում է, որ առաջիկա երկու տարիների ընթացքում աստիճանաբար կմոտենա ՀՀ ԿԲ 4 տոկոս նպատակային թիրախին, երբ միանգամյա գործոնները թուլանան: Ընթացիկ հաշվի դեֆիցիտն ակնակալվում է, որ աստիճանաբար կնվազի մինչև ՀՆԱ-ի շուրջ 5 տոկոսը: Հեռանկարի ռիսկերը հիմնականում արտաքին են:

«Քաղաքականության մասով՝ հարկաբյուջետային ջանքերն անհրաժեշտ է, որ շարունակեն նպատակաուղղված լինել պարտքի կայունության և միաժամանակ ներդրումների և սոցիալական ծախսերի հնարավորությունների պահպանմանը: Այս առումով աշխատակազմը ողջունում է հինգ տարվա ընթացքում կենտրոնական կառավարության պարտքը ՀՆԱ-ի 50 տոկոսից իջեցնելու իշխանությունների հանձնառությունն՝ առաջնորդվելով հարկաբյուջետային վերափոխված կանոնով: Կանխատեսվում է, որ բյուջեի դեֆիցիտի 2019 թ. կկազմի ՀՆԱ-ի մոտավորապես 2½ տոկոսը և միջնաժամկետ հատվածում՝ ՀՆԱ-ի 2 տոկոսը:

«Հարկաբյուջետային նպատակներին կաջակցեն հարկային և ծախսային բարեփոխումները: Իշխանությունները դիտարկում են հարկային բարեփոխումների փաթեթ՝ կարգապահությունը և միջնաժամկետ աճը խթանելու համար: Բարեփոխումը կարճաժամկետ հեռանկարում կենթադրի եկամտի կորուստներ, քանի որ կարգապահության բարձրացումն ակնկալվում է որ միայն ժամանակի ընթացքում իրականություն կդառնա: Ուստի, առանցքային

կարևորություն ունի հարկային քաղաքականության միջոցառումների նախատեսվող փաթեթի իրականացումը՝ նշված կորուստների լիարժեք չեզոքացման համար, միաժամանակ հաշվի առնելով բարեփոխման հնարավոր ազդեցությունը հավասարության վրա: Այս առումով աշխատակազմը հատկապես ողջունում է 2019-20 թթ.-ի ընթացքում գույքի հարկումը վերափոխելու իշխանությունների հանձնառությունը՝ արդարացիությունը մեծացնելու համար և հարկային վարչարարության և հարկերից խուսափելու խորքային դրսևորման դեմ պայքարի հետագա ջանքերի կոչ է անում: Ծախսերի մասով՝ 2019-21 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը նպատակաուղղված է ՀՆԱ-ի նկատմամբ կապիտալ ծախսերի ավելացմանը՝ զսպելով ընթացիկ ծախսերը: Առաջնահերթությունների թվում են՝ պետական ֆինանսների կառավարման բարեփոխումների արագացումը և պետական ներդրումների կառավարման ուժեղացումը:

«Գների կայունությունը պետք է շարունակի մնալ դրամավարկային քաղաքականության առանցքում: Քաղաքականության ներկայիս դիրքը նպատակահարմար է և ՀՀ ԿԲ միջնաժամկետ թիրախին համահունչ: Աշխատակազմը ողջունում է փոխարժեքի գործող ճկուն ռեժիմը պահպանելու իշխանությունների մտադրությունը՝ միաժամանակ նպատակ ունենալով ապահովել միջազգային պահուստների համարժեքությունը:

«Ֆինանսական հատվածը շարունակել է ամրապնդվել, և վարկերի մատչելիությունը բարելավվել է: 2018 թ. ֆինանսական կայունության գնահատման ծրագրի (FSAP) հանձնարարականների վրա հիմնվելով՝ իշխանությունները ձեռնարկում են ֆինանսական կայունության ամրապնդմանը և ֆինանսական զարգացումը խթանելուն ուղղված քայլեր: Առանձին քայլերի թվում են՝ իրացվելիության ավելի ամուր բուֆերների ստեղծումը, համակարգային իրացվելիության կառավարման բարելավումը, և դոլարացման հետագա կրճատման մակրոպրուդենցիալ միջոցառումների ամրապնդումը և կապիտալի շուկաների զարգացումը:

«Կառուցվածքային բարեփոխումների նոր կառավարության հավակնոտ օրակարգով պատշաճ շեշտադրվում է կոռուպցիայի դեմ պայքարը, գործարար միջավայրի բարելավումը և մարդկային կապիտալի ու ենթակառուցվածքների զարգացումը: Այս առումով առանցքային միջոցառումների թվում են՝ հակակոռուպցիոն մարմնի ստեղծումը, կորպորատիվ թափանցիկության և կառավարման ամրապնդումը և ակտիվ աշխատաշուկայի քաղաքակության իրականացումը: Նշված բարեփոխումներն անհրաժեշտ է վճռականորեն իրականացնել՝ արդար մրցակցության և հավասար հնարավորությունների

խթանմանը, որպես աճի շարժիչ՝ մասնավոր հատվածի դերին զարկ տալուն և աղքատությունն ու գործազրկությունը նվազեցմանն աջակցելու համար:

ԱՄՀ թիմը ցանկանում է շնորհակալություն հայտնել բոլոր գործընկերներին՝ բաց և կառուցողական քննարկումների և համագործակցության համար»: